447 Ներկա է Տերը,

1. Ներկա է Տերը,
Ցանկանում է հանդիպել քեզ Տերը:
Ցանկանում է հանդիպել,
Հոգուդ հանգիստ պարգևել,
Սիրտդ Հիսուսին այսօր
Դու բացիր: (2)

2. Ներկա է Տերը,
Ցանկանում է հանդիպել քեզ Տերը:
Քո առջևդ, Տե՛ր Աստված,
Կանգնել ենք մենք խոնարհված,
Փառաբանում ենք Քեզ, Տե՛ր,
Որ ներկա ես այստեղ:

***

1. Քեզ սիրեմ, բարձրացնեմ,
Տեր Հիսուս սիրելի,
Անունդ պիտի օրհնեմ,
Զորությունդ պատմեմ,
Հավիտյան Քեզ գովեմ,
Ո՛վ Արքա: (2)

2. Ամեն աչք կսպասի
Փառավոր գալուստիդ.
Թող սուրբերն ուրախանան
Ցնծության ծնծղաներով,
Տավիղով ու քնարով,
Ո՛վ Արքա: (2)